35.21.10	Գազ քարածխային, գազ ջրային, գազ գեներատորային և համանման գազեր, բացի նավթային գազերից Տվյալ ենթակարգը ներառում է՝ - գազամատակարարման նպատակով քարածխի գազացման միջոցով, գյուղատնտեսական

	կողմնակի մթերքից կամ թափոններից արտադրվող գազ <i>Քացառվում է՝</i> - բնական վառելիքազգր, տես 06.20.10 - նավթագազերը, տես 19.20.3 - արդյունաբերական գազերը, տես 20.11.1
35.22	Խողովակաշարերով գազակերպ վառելիքի բաշխման ծառայություններ
35.22.1	Խողովակաշարերով գազակերպ վառելիքի բաշխման ծառայություններ
35.22.10	Խողովակաշարերով գազակերպ վառելիքի բաշխման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - խողովակաշարերի բաշխիչ համակարգերի միջոցով բոլոր տեսակի գազակերպ վառելիքի բաշխման և մատակարարման ծառայություններ - գազի հաշվիչների տեխնիկական սպասարկման ծառայություններ <i>Քացառվում է՝</i> - գազի հաշվիչների տեղադրման ծառայությունները, տես 43.22.20 - մայրուղային խողովակաշարերով գազային վառելիքի փոխադրման ծառայությունները, տես 49.50.11 - գազի հաշվիչների ցուցմունքների գրանցումը, տես 82.99.19
35.23	Փազանատակարարման համակարգով գազի վաճառքի ծառայություններ
35.23.1	Փազանատակարարման համակարգով գազի վաճառքի ծառայություններ
35.23.10	Փազանատակարարման համակարգով գազի վաճառքի ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - սպառողներին գազի վաճառքի ծառայություններ - այլ կազմակերպությունների կողմից կառավարվող բաշխիչ ցանցերով գազի վաճառքով զբաղվող գործակալների և միջնորդների ծառայություններ - գազի սպառման և անցումակության կառավարման հետ կապված ծառայություններ <i>Քացառվում է՝</i> - գազակերպ վառելիքի մեծածախ առևտրի ծառայությունները, տես 46.71.13 - գազակերպ վառելիքի մանրածախ առևտրի ծառայությունները, տես 47.00.85
35.3	Գոլորշու և լավորակ օդի մատակարարման ծառայություններ
35.30	Գոլորշու և լավորակ օդի մատակարարման ծառայություններ
35.30.1	Գոլորշի և տաք ջուր. գոլորշու և տաք ջրի մատակարարման ծառայություններ
35.30.11	Գոլորշի և տաք ջուր
35.30.12	Խողովակաշարերով գոլորշու և տաք ջրի մատակարարման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ջեռուցման, էներգիայի և այլ նպատակների համար գոլորշու և տաք ջրի մատակարարման ծառայություններ <i>Քացառվում է՝</i> - բնակելի տարածքներում ջեռուցման հաշվիչների ցուցմունքների գրանցումը, տես 82.99.19
35.30.2	Սառույց բնական, հովազնող օդի և սառը ջրի մատակարարման ծառայություններ
35.30.21	Սառույց բնական, ներառյալ սառեցման համար ոչ սննդային սառույցը
35.30.22	Հովազնող օդի և սառը ջրի մատակարարման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - խողովակաշարերով հովազնող օդի և սառը ջրի մատակարարման ծառայություններ - սառույցի մատակարարման ծառայություններ
E (Ի)	ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԿՈՅՈՒՂՈՒ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
36	Բնական ջուր, ջրի մաքրման և մատակարարման ծառայություններ
36.0	Բնական ջուր, ջրի մաքրման և մատակարարման ծառայություններ
36.00	Բնական ջուր, ջրի մաքրման և մատակարարման ծառայություններ
36.00.1	Բնական ջուր
36.00.11	Խմելու ջուր
36.00.12	Ոչ խմելու ջուր
36.00.2	Ջրի մաքրման և ջրմուղով ջրի բաշխման ծառայություններ
36.00.20	Ջրի մաքրման և ջրմուղով ջրի բաշխման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - մաքրման ծառայություններ ջրի մատակարարման համար - արդյունաբերական և այլ նպատակների համար ջրի մշակման ծառայություններ - ջրմուղով ջրի բաշխման ծառայություններ

	<ul style="list-style-type: none"> - ոռոգման ջրանցքների շահագործման ծառայություններ - ջրի հաշվիչների տեխնիկական սպասարկում - տրանսպորտով կամ այլ միջոցներով ջրի բաշխման ծառայություններ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - գյուղատնտեսական նպատակներով ոռոգման համակարգերի շահագործման ծառայությունները, տես 01.61.10 - շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման նպատակներով կոյուղաջրերի մշակման ծառայությունները, տես 37.00.11 - ջրի հաշվիչների տեղադրման ծառայությունները, տես 43.22.11 - մայրուղային խողովակաշարերով ջրի փոխադրման ծառայությունները, տես 49.50.19 - ջրի հաշվիչների ցուցմունքների գրանցումը, տես 82.99.19
36.00.3	Ջրմուղով մատակարարվող ջրի վաճառքի ծառայություն
36.00.30	Ջրմուղով մատակարարվող ջրի վաճառքի ծառայություն
37	Կոյուղու ծառայություններ. կեղտաջրերի ապարախյուս (շլամ)
37.0	Կոյուղու ծառայություններ. կեղտաջրերի ապարախյուս (շլամ)
37.00	Կոյուղու ծառայություններ. կեղտաջրերի ապարախյուս (շլամ)
37.00.1	Կոյուղու ծառայություններ
37.00.11	Կեղտաջրերի հավաքման և մաքրման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - կեղտաջրերի հավաքման ծառայություններ, մատուցվող տարբեր սարքավորանքի (հեղուկաթափ խողովակներ, կոյուղու կամ ցամաքուղային խողովակներ և այլն) օգտագործմամբ - կեղտաջրերի (կենցաղային, արդյունաբերական, լողավազանների և այլ) մշակման ծառայություններ՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական մեթոդների կիրառմամբ (լուծում, մզում, գտում, մատեցում և այլն) - կոյուղու համակարգերի, ցամաքուղային խողովակների տեխնիկական սպասարկման և մաքրման ծառայություններ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - ջրի հավաքման և մաքրման ծառայությունները, տես 36.00 - ջրմուղով ջրի մատակարարման ծառայությունները, տես 36.00.20 - կոյուղու համակարգերի կառուցման, նորոգման և վերափոխման ծառայությունները, տես 42.21.2
37.00.12	Կեղտաջրի հորերի և կոյաջրի ավազանների մաքրման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - աղբահորերի, կեղտաջրի հորերի և կոյաջրի ավազանների դատարկում և մաքրում - կենսազուգարանների սպասարկում <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - աղտոտված միջավայրի մակերևութային և գրունտային ջրերի ախտահանումը, տես 39.00.11 և 39.00.12 - շենքերի անձրևաջրերի խողովակների մաքրումը, տես 43.22.11
37.00.2	Կեղտաջրերի ապարախյուս (շլամ)
37.00.20	Կեղտաջրերի ապարախյուս (շլամ)
38	Թափոնների հավաքման, մշակման և ոչնչացման ծառայություններ. թափոնների օգտահանման ծառայություններ
38.1	Թափոններ. թափոնների հավաքման ծառայություններ
38.11	Ոչ վնասակար թափոններ. ոչ վնասակար թափոնների հավաքման ծառայություններ
	<p>Տվյալ դասը ներառում է նաև՝</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական թափոնների և շենքերի ու կառույցների քանդման արդյունքում առաջացած աղբի հավաքման ծառայություններ - բեկորների, վրձինների և համանման այլ շինարարական աղբի հավաքման և ոչնչացման ծառայություններ - մանածագործական արտադրատեսակների արտադրությունից առաջացած թափոնների հավաքման ծառայություններ
38.11.1	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար պիտանի թափոնների հավաքման ծառայություններ
38.11.11	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար պիտանի քաղաքային տնտեսության թափոնների հավաքման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - կրկնակի օգտագործման համար պիտանի ոչ վնասակար թափոնների (տեսակավորված կամ միախառնված կենցաղային աղբի՝ սովորաբար, թղթի, պլաստմասսաների, ապակու, ալյումինի, պողպատի, բնակարանային օրգանական թափոնների, ներառյալ բակի, փողոցի աղբարկղերի թափոնները) հավաքման ծառայություններ, այդ թվում՝ կանոնավոր կամ ճկուն ժամանակացույցով

	իրականացվող հավաքման ծառայությունները
38.11.19	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար պիտանի այլ թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ոչ բնակելի օբյեկտների ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար պիտանի, տեսակավորված կամ միախառնված թափոնների՝ ստվարաթղթի, թղթի, պլաստմասսաների, ապակու, ալյումինի, պողպատի և այլ թափոնների հավաքման ծառայություններ, ներառյալ կանոնավոր կամ ճկուն ժամանակացույցով ավտոմատ հավաքվող թափոնների հավաքման ծառայությունները
38.11.2	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի թափոնների հավաքման ծառայություններ
38.11.21	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի քաղաքային տնտեսության թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - բնակելի շենքերից թափոնների, աղբի, մնացորդների, ոչ պիտանի իրերի և խառը նյութերի ընդհանուր հավաքում, ներառյալ բակի, փողոցի աղբարկղերից թափոնների հավաքման ծառայությունները, այդ թվում կանոնավոր կամ ճկուն ժամանակացույցով իրականացվող հավաքման ծառայությունները
38.11.29	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի այլ թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ոչ բնակելի օբյեկտներից թափոնների, մնացորդների և խառը նյութերի ընդհանուր հավաքում, կանոնավոր կամ ճկուն ժամանակացույցով
38.11.3	Ոչ վնասակար և կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի թափոններ, հավաքված
38.11.31	Քաղաքային տնտեսության ոչ վնասակար և կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի թափոններ
38.11.39	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի այլ թափոններ
38.11.4	Ապամոնտաժում, կտրատում
38.11.41	Ապամոնտաժման ենթակա նավեր և այլ լողուն կառույցներ
38.11.49	Ապամոնտաժման ենթակա այլ բեկվածքներ, բացի նավերից և լողուն կառույցներից
38.11.5	Ոչ վնասակար այլ թափոններ, կրկնակի օգտագործման համար պիտանի, հավաքված
38.11.51	Ապակու թափոններ
38.11.52	Թղթի և ստվարաթղթի թափոններ
38.11.53	Ռետինե օդաճնշական անվադողեր, օգտագործված
38.11.54	Ռետինե այլ թափոններ
38.11.55	Պլաստմասսայի թափոններ
38.11.56	Մանածագործական արտադրության թափոններ
38.11.57	Կաշվի թափոններ
38.11.58	Մետաղի ոչ վնասակար թափոններ
38.11.59	Ոչ վնասակար այլ թափոններ, պիտանի կրկնակի օգտագործման համար, չներառված ուրիշ խմբավորումներում Տվյալ ենթակարգը ներառում է նաև՝ - վերամշակման համար նախատեսված միախառնված նյութեր, օրինակ՝ մետաղի և պլաստմասսայի թափոնների խառնուրդ
38.11.6	Ոչ վնասակար թափոնների փոխաբեռնման կայանների ծառայություններ
38.11.61	Ոչ վնասակար, կրկնակի օգտագործման համար պիտանի թափոնների փոխաբեռնման կայանների ծառայություններ <i>Բացառվում է՝</i> <i>- ըստ կատեգորիաների կրկնակի օգտագործման համար պիտանի միախառնված նյութերի տեսակավորման կայանների շահագործման ծառայությունները, տես 38.32.1</i>
38.11.69	Ոչ վնասակար այլ թափոնների փոխաբեռնման կայանների ծառայություններ <i>Բացառվում է՝</i> <i>- վերջնական վերացման համար ոչ վնասակար թափոնների մշակման ծառայությունները, տես 38.21.10</i>
38.12	Վնասակար թափոններ. վնասակար թափոնների հավաքման ծառայություններ
38.12.1	Վնասակար թափոնների հավաքման ծառայություններ <i>Բացառվում է՝</i> <i>- վարակված կառույցների, հողատարածքների, բնահողի, ստորգետնյա ջրերի մաքրումը և մշակումը, օրինակ՝ անկիզբարի հեռացման ծառայությունները, տես 39.00.1</i>
38.12.11	Բժշկական և այլ կենսաբանական վնասակար թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է հատուկ հավաքման համար նախատեսված թափոնների հավաքում՝ - վարակված անատոմիական և ոչ անատոմիական թափոնների, սուր թափոնների՝ ասեղների և հերձադանակների

	- հիվանդանոցներից, բժշկական կաբինետներից, ատամնաբուժական կաբինետներից, բժշկական լաբորատորիաներից այլ վարակիչ կենսաբանական թափոնների - ոչ բնակելի օբյեկտներից այլ կենսաբանական վնասակար թափոնների
38.12.12	Այլ վնասակար արդյունաբերական թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է հատուկ հավաքման համար նախատեսված թափոնների հավաքում՝ - մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար թափոնների (բացի բժշկական և կենսաբանական), երբ պահանջվում են մշակման հատուկ մեթոդներ, որոնք սահմանված են համաձայն օրենսդրության կամ կանոնադրության նորմերի, օրինակ՝ միջուկային թափոնների, շարժիչային կամ տրանսպորտային օգտագործված յուղերի
38.12.13	Քաղաքային տնտեսության վնասակար թափոնների հավաքման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է հատուկ հավաքման համար նախատեսված թափոնների հավաքում՝ - կենցաղային վնասակար թափոնների, ներառյալ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար թափոնների (բացի բժշկական և կենսաբանական) հավաքում, օրինակ՝ օգտագործված մարտկոցների, կիրառելով մշակման հատուկ մեթոդներ, որոնք սահմանված են օրենսդրության կամ կանոնադրության նորմերի համաձայն
38.12.2	Վնասակար թափոններ, հավաքված
38.12.21	Միջուկային ռեակտորների օգտագործված (ճառագայթված) ջերմատարրեր
38.12.22	Դեղագործական թափոններ
38.12.23	Այլ բժշկական վնասակար թափոններ
38.12.24	Քիմիական վնասակար թափոններ
38.12.25	Շարժիչային կամ մեքենայի բանած յուղեր
38.12.26	Մետաղների վնասակար թափոններ
38.12.27	Մարտկոցների, առաջնային տարրերի և էլեկտրական կուտակիչների թափոններ, մետաղաշարդոն
38.12.29	Այլ վնասակար թափոններ
38.12.3	Վնասակար թափոնների փոխաբեռնման կայանների ծառայություններ
38.12.30	Վնասակար թափոնների փոխաբեռնման կայանների ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - երկրորդային հումքի հավաքման կենտրոնների, փոխաբեռնման կայանների և բեռնարկային հարթակների ծառայություններ
38.2	Թափոնների մշակման և հեռացման ծառայություններ
38.21	Ոչ վնասակար թափոնների մշակման և հեռացման ծառայություններ
38.21.1	Ոչ վնասակար թափոնների մշակման ծառայություններ վերջնական հեռացման համար
38.21.10	Ոչ վնասակար թափոնների մշակման ծառայություններ վերջնական հեռացման համար
38.21.2	Ոչ վնասակար թափոնների հեռացման ծառայություններ
38.21.21	Սանիտարական աղբակույտերի աղտահանման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ոչ վնասակար թափոնների ոչնչացում կամ թաղում սանիտարական աղբակույտերում, որոնք համապատասխանում են օրենսդրության կամ կանոնադրության նորմերին համաձայն սահմանված չափանիշներին
38.21.22	Այլ աղբակույտերի աղտահանման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ոչ վնասակար թափոնների ոչնչացում կամ թաղում այլ աղբակույտերում, բացի սանիտարական աղբակույտերից
38.21.23	Ոչ վնասակար թափոնների այրման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - ոչ վնասակար թափոնների այրում կայանքներում, որոնց շահագործումը համապատասխանում է իրավական նորմերով սահմանված ոչ վնասակար թափոնների այրման ստանդարտներին և պահանջներին
38.21.29	Ոչ վնասակար թափոնների հեռացման այլ ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է ոչ վնասակար թափոնների հեռացման ծառայություններ՝ - քիմիական և կենսաբանական մեթոդներով գյուղատնտեսական թափոնների ծավալների կրճատման և համանման մշակման ծառայություններ - պարարտախառնուրդների արտադրության ծառայություններ - բիոգազի ստացման համար գյուղատնտեսական և այլ թափոնների մշակման ծառայություններ
38.21.3	Օրգանական լուծիչների թափոններ
38.21.30	Օրգանական լուծիչների թափոններ
38.21.4	Մոխիր և թափոնների այրման մնացորդներ
38.21.40	Մոխիր և թափոնների այրման մնացորդներ
38.22	Վնասակար թափոնների մշակման և հեռացման ծառայություններ
38.22.1	Միջուկային արդյունաբերության և այլ վնասակար թափոնների մշակման ծառայություններ
38.22.11	Միջուկային արդյունաբերության թափոնների մշակման ծառայություններ
38.22.19	Վնասակար թափոնների մշակման այլ ծառայություններ

	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - հետագա ոչնչացման կամ վերամշակման նպատակով վնասակար թափոնների ծավալների կրճատման համար մշակման այլ ծառայություններ՝ կենսաբանական, քիմիական և/կամ ֆիզիկական մեթոդների կիրառմամբ կամ այրման միջոցով Նշված մեթոդների կիրառման արդյունքում ստացված մնացուկները ոչնչացվում կամ վերամշակվում են:
38.22.2	Միջուկային արդյունաբերության և այլ վնասակար թափոնների հեռացման ծառայություններ
38.22.21	Միջուկային արդյունաբերության թափոնների հեռացման ծառայություններ
38.22.29	Վնասակար այլ թափոնների հեռացման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - վնասակար թափոնների ոչնչացում կայանքներում, որոնց շահագործումը համապատասխանում է օրենսդրական նորմերով սահմանված վնասակար թափոնների ոչնչացման չափանիշներին
38.3	Թափոնների օգտահանման ծառայություններ. երկրորդային հումք
38.31	Ջարդոնի մասնատում
38.31.1	Ջարդոնի մասնատում
38.31.11	Նավերի կազմատման ծառայություններ
38.31.12	Բեկվածքների, բացի նավերից և լողուն կառույցներից, մասնատման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - մեքենաների, համակարգիչների և համանման արտադրանքի ջարդոնի մասնատման ծառայություններ՝ տարբեր նյութերի ստացման և օգտահանման համար <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - <i>Նավերի և այլ լողուն կառույցների մասնատման ծառայությունները, տես 38.31.11</i>
38.32	Տեսակավորված նյութերի օգտահանման ծառայություններ. երկրորդային հումք
38.32.1	Տեսակավորված նյութերի օգտահանման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - տեսակավորված նյութերի օգտահանման ծառայություններ՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - <i>թափոնների և ջարդոնի մեծածախ առևտրի ծառայություններ, ներառյալ հավաքումը, տեսակավորումը, փաթեթավորումը, առևտուրը և այլն՝ առանց արդյունաբերական գործընթացների կիրառման (46.77.10)</i>
38.32.11	Տեսակավորված մետաղական նյութերի օգտահանման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - երկրորդային հումք ստանալու նպատակով մետաղական թափոնների, ջարդոնի և այլ մետաղական արտադրատեսակների (օգտագործված կամ չօգտագործված) վերամշակման ծառայություններ, պայմանով որ մետաղական թափոնները, ջարդոնը և այլ մետաղական արտադրատեսակները, տեսակավորված կամ չտեսակավորված, պիտանի չեն արդյունաբերական գործընթացներում անմիջական օգտագործման համար: Վերամշակման (մեխանիկական կամ քիմիական) գործընթացներից են՝ ավտոմեքենաների, լվացքի մեքենաների, հեծանիվների և այլ մետաղական արտադրատեսակների ջարդում, տեսակավորում և անջատում, խոշոր մետաղական առարկաների (օրինակ՝ վագոնների) կտրատում և մեխանիկական սեղմում, օգտագործված արտադրատեսակների (օրինակ՝ մեքենաների) քանդում՝ օգտագործման համար պիտանի մասերի ստացման համար, օգտագործված արտադրատեսակների (օրինակ՝ մեքենաների, սառնարանների և այլն) քանդում՝ վնասակար նյութերի (յուղերի, հովացման հեղուկի, վառելիքի և այլն) կորզման համար:
38.32.12	Տեսակավորված ոչ մետաղական նյութերի օգտահանման ծառայություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - երկրորդային հումք ստանալու նպատակով ոչ մետաղական թափոնների, ջարդոնի և ոչ մետաղական արտադրատեսակների (օգտագործված կամ չօգտագործված) վերամշակման ծառայություններ, պայմանով որ ոչ մետաղական թափոնները, ջարդոնը և այլ ոչ մետաղական արտադրատեսակները, տեսակավորված կամ չտեսակավորված, պիտանի չեն արդյունաբերական գործընթացներում անմիջական օգտագործման համար: Վերամշակման (մեխանիկական կամ քիմիական) գործընթացներից են օրինակ՝ օգտագործված անվադողերից ռետինի կորզում՝ երկրորդային հումք ստանալու համար, պլաստմասսաների տեսակավորում և հատիկավորում՝ խողովակների, ծաղկամանների և համանման արտադրատեսակների համար երկրորդային հումք ստանալու նպատակով, քիմիական թափոններից քիմիական նյութերի կորզում, ապակիների, շինարարական աղբի և համանման թափոնների ջարդում, մաքրում և տեսակավորում՝ երկրորդային հումքի ստացման համար:
38.32.2	Երկրորդային մետաղական հումք
38.32.21	Թանկարժեք մետաղներ պարունակող երկրորդային հումք
38.32.22	Սև մետաղներ պարունակող երկրորդային հումք
38.32.23	Պղինձ պարունակող երկրորդային հումք
38.32.24	Նիկել պարունակող երկրորդային հումք
38.32.25	Ալյումին պարունակող երկրորդային հումք

38.32.29	Այլ երկրորդային մետաղական հումք
38.32.3	Ոչ մետաղական երկրորդային հումք
38.32.31	Ապակե երկրորդային հումք
38.32.32	Թղթե և ստվարաթղթե երկրորդային հումք
38.32.33	Պոլիմերային երկրորդային հումք
38.32.34	Ռետին պարունակող երկրորդային հումք
38.32.35	Մանածագործական երկրորդային հումք
38.32.39	Այլ ոչ մետաղական երկրորդային հումք
39	Աղտոտվածքի վնասագերծման ծառայություններ և թափոնների հեռացման այլ ծառայություններ
39.0	Աղտոտվածքի վնասագերծման և թափոնների հեռացման այլ ծառայություններ
39.00	Աղտոտվածքի վնասագերծման և թափոնների հեռացման այլ ծառայություններ Տվյալ դասը ներառում է՝ - արդյունաբերական օբյեկտների շահագործման կամ վթարների արդյունքում առաջացած աղտոտվածքի վնասագերծման ծառայություններ՝ աղտոտված բնահողի, ջրի, օդի անմիջապես տեղում մաքրման կամ տեղայնացման նպատակով
39.00.1	Վնասագերծման և մաքրման ծառայություններ
39.00.11	Բնահողի և գետնաջրերի աղտոտվածքի վնասագերծման և մաքրման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - բնահողի և գետնաջրերի վնասագերծման և մաքրման ծառայություններ աղտոտված տարածքներում, համաձայն օրենսդրական կամ այլ իրավական նորմերի պահանջներին Տվյալ ենթակարգը ներառում է նաև՝ - հանքահորերի, հորանների և այլնի հարթում (ներառյալ ճայթեցման եղանակը) <i>Բացառվում է՝</i> <i>- ջրամատակարարման համար ջրի մաքրման ծառայությունները, տես 36.00.20</i>
39.00.12	Մակերևութային ջրերի աղտոտվածքի վնասագերծման և մաքրման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - մակերևութային ջրերի վնասագերծման և մաքրման ծառայություններ աղտոտված տարածքներում՝ օրենսդրական կամ այլ իրավական նորմերի պահանջներին համաձայն
39.00.13	Օդի աղտոտվածքի վնասագերծման և մաքրման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - օդի վնասագերծման և մաքրման ծառայություններ աղտոտված տարածքներում, համաձայն օրենսդրական կամ այլ իրավական նորմերի պահանջներին
39.00.14	Շենքերի աղտոտվածքի վնասագերծման և մաքրման ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - շենքերում անկիզաքարի, կապարի, ռադոնի և այլ աղտոտվածքների հեռացմանը, ոչնչացմանը, տեղայնացմանը կամ այլ ձևով ծավալների նվազեցմանն ուղղված գործողությունների պլանի մշակում և իրականացում
39.00.2	Աղտոտվածքի վնասագերծման այլ ծառայություններ և շրջակա միջավայրի աղտոտման վերահսկման մասնագիտացված ծառայություններ
39.00.21	Վարակված տարածքների տեղայնացման, վերահսկման և դիտարկման ծառայություններ. աղտոտված տարածքների վնասագերծման այլ ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - տարածքի լրացուցիչ աղտոտման և աղտոտվածքի տարածման կանխմանն ուղղված ծառայություններ - տարածքներից նյութերի անկառավարելի տեղափոխումը կանխող ծառայություններ - աղտոտված տարածքների վիճակի դիտարկում՝ աղտոտվածքի վնասագերծման արդյունավետության գնահատման համար - աղտոտված տարածք մուտք գործելու վերահսկում - տարածքների վնասագերծման այլ ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում
39.00.22	Վնասագերծման այլ ծառայություններ Տվյալ ենթակարգը ներառում է՝ - բնապահպանական արտակարգ վիճակներում ձեռնարկված միջոցառումների հետ կապված ծառայություններ - այլ վնասագերծման ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում <i>Բացառվում է՝</i> <i>- գյուղատնտեսական վնասատուների հետ պայքարը, տես 01.61.10</i> <i>- փողոցների ավլումը, ջրումը և այլն, տես 81.29.12</i>
39.00.23	Շրջակա միջավայրի աղտոտման վերահսկման այլ մասնագիտացված ծառայություններ

	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - թթվային տեղումների («թթվային անձրևներ») դիտարկման, դրանց վերահսկման և վնասի գնահատման ծառայություններ - շրջակա միջավայրի աղտոտման վերահսկման այլ մասնագիտացված ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - շրջակա միջավայրի հարցերով խորհրդատվական ծառայությունները, տես 74.90.13
F (ԷՖ)	ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
41	Շենքեր և կառույցներ. շենքերի և կառույցների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ
41.0	Շենքեր և կառույցներ. շենքերի և կառույցների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ
41.00	Շենքեր և կառույցներ. շենքերի և կառույցների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ
41.00.1	Բնակելի շենքեր և շինություններ
41.00.10	Բնակելի շենքեր և շինություններ
41.00.2	Ոչ բնակելի շենքեր և շինություններ
41.00.20	Ոչ բնակելի շենքեր և շինություններ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - պահեստավորման, արտադրության, արդյունաբերական կազմակերպությունների գործունեության համար օգտագործվող շենքեր և շինություններ - գործարանների, արտադրամասերի շենքեր և շինություններ - առևտրի, առևտրական գործունեության համար օգտագործվող շենքեր և շինություններ - հիմնականում մեծածախ և մանրածախ առևտրի համար օգտագործվող շենքեր - գրասենյակների, բանկերի, օդանավակայանների, ավտոկայանների, երկաթուղային կայարանների, ավտոտնակների, մեքենաների տեխնիկական սպասարկման և ավտուղակայանների շենքեր և շինություններ - փակ լողավազաններ և այլ սպորտային կառույցներ, փակ մարզադաշտեր (սահադաշտեր, մարզասրահներ, թենիսի փակ դաշտեր, հատուկ նշանակության սպորտային սրահներ, բռնցքամարտի հրապարակներ) - մշակութային կազմակերպությունների շենքեր՝ կինոթատրոններ, թատրոններ, համերգային սրահներ, պարասրահներ և գիշերային ակումբներ - հյուրանոցների, մոթելների, պանդոկների, հանրակացարանների, ռեստորանների և համանման նպատակների համար շենքեր - կրթական հաստատությունների՝ դպրոցների, քոլեջների, համալսարանների, գրադարանների, արխիվների և թանգարանների շենքեր - առողջապահական կազմակերպությունների՝ հիվանդանոցների, առողջարանների շենքեր - ուրիշ խմբավորումներում չներառված այլ ոչ բնակելի շենքեր, օրինակ՝ կրոնական կազմակերպությունների և բանտերի շենքեր
41.00.3	Բնակելի շենքերի և շինությունների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ (նոր շենքերի, օժանդակ կառույցների կառուցման աշխատանքներ, վերակառուցման և նորոգման աշխատանքներ)
41.00.30	Բնակելի շենքերի և շինությունների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ (նոր շենքերի, օժանդակ կառույցների կառուցման աշխատանքներ, վերակառուցման և նորոգման աշխատանքներ)
	<p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - շենքերի պողպատե կամ երկաթբետոնե հատուկ հենքերի հավաքակցման ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 43.99.40 և 43.99.50
41.00.4	Ոչ բնակելի շենքերի և շինությունների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ (նոր շենքերի, օժանդակ կառույցների կառուցման աշխատանքներ, վերակառուցման և նորոգման աշխատանքներ)
41.00.40	Ոչ բնակելի շենքերի և շինությունների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ (նոր շենքերի, օժանդակ կառույցների կառուցման աշխատանքներ, վերակառուցման և նորոգման աշխատանքներ)
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - արդյունաբերական, գյուղատնտեսական, արտադրական շենքերի և պահեստների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - առևտրական կամ վարչական շենքերի՝ գրասենյակների, բանկերի, առևտրի կենտրոնների, օդանավակայանների, ավտոկայանների, երկաթուղային կայարանների, ավտոտնակների, մեքենաների տեխնիկական սպասարկման և ավտուղակայանների շենքերի և շինությունների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - մշակութային կազմակերպությունների շենքերի՝ կինոթատրոնների, թատրոնների, համերգային

	<p>սրահների, պարասրահների և գիշերային ակունքների կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <ul style="list-style-type: none"> - հյուրանոցների, մոթելների, պանդոկների, հանրակացարանների, ռեստորանների և համանման նպատակների համար շենքերի կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - կրթական հաստատությունների՝ դպրոցների, քոլեջների, համալսարանների, գրադարանների, արխիվների և թանգարանների շենքերի կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - առողջապահական կազմակերպությունների՝ հիվանդանոցների, առողջարանների շենքերի կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - փակ լողավազանների և այլ սպորտային կառույցների, փակ մարզադաշտերի (սահադաշտերի, մարզասրահների, թենիսի փակ դաշտերի, հատուկ նշանակության սպորտային սրահների, բռնցքամարտի հրապարակների և այլն) կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - ուրիշ խմբավորումներում չներառված այլ ոչ բնակելի շենքերի, օրինակ՝ կրոնական կազմակերպությունների և բանտերի շենքերի կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ <p><i>Քացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - <i>հանքարդյունահանող և մշակող արդյունաբերության համար օժանդակ կառույցների, բացի շենքերից, կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.99.21</i>
42	<p>Քաղաքացիական շինարարության բնագավառում կառույցներ և ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ հատվածը ներառում է նաև՝</p> <ul style="list-style-type: none"> - քաղաքացիական շինարարության բնագավառում նախագծերի մշակման ծառայություններ <p><i>Քացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - <i>շենքերի շինարարական նախագծերի վերամշակման ծառայությունները, տես 41.00.20</i>
42.1	<p>Ավտոմոբիլային ճանապարհներ և երկաթուղիներ. ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.11	<p>Ավտոմոբիլային ճանապարհներ և ավտոմայրուղիներ. ավտոմոբիլային ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.11.1	<p>Ավտոմայրուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, փողոցներ և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի ճանապարհներ, օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիներ</p>
42.11.10	<p>Ավտոմայրուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, փողոցներ և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի ճանապարհներ, օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - ավտոմայրուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, փողոցներ և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի ճանապարհներ - ճանապարհային ցանկապատեր և պինդ պատվածքով ավտոկայանատեղեր, առբերման ճանապարհներ, փողոցի ավտոմոբիլային թունելներ, հետիոտնի գետնանցումներ ու վերգետնյա անցումներ և հեծանվաուղիներ - օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիներ, ներառյալ գետնավարման ճանապարհները և համանման կառույցները, բացառությամբ շենքերը <p><i>Քացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - <i>էստակադները, տես 42.13.10</i> - <i>ավտոմայրուղիների թունելները, տես 42.13.10</i>
42.11.2	<p>Ավտոմայրուղիների, ավտոմոբիլային ճանապարհների, փողոցների և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի ճանապարհների, օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.11.20	<p>Ավտոմայրուղիների, ավտոմոբիլային ճանապարհների, փողոցների և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի ճանապարհների, օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - ավտոմայրուղիների, ավտոմոբիլային ճանապարհների, փողոցների և այլ ավտոմոբիլային կամ հետիոտնի համար ճանապարհների պատվածքների հիմքերի կառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ - պինդ պատվածքով ավտոկայանատեղերի պատվածքների (ասֆալտից, բետոնից և այլն) վերականգնման ընդհանուր շինարարական աշխատանքներ - հետիոտնի համար ուղիների, մայթերի, ավտոտրանսպորտի շարժման արագության իջեցման համար ճանապարհային կառույցների, հեծանվաուղիների և այլնի շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ - ճանապարհային ցանկապատերի, ցածր բաժանիչ պատերի, ճանապարհային նշանների և այլնի հավաքակցման աշխատանքներ - ճանապարհային երթուղիների և ցուցանակների սյուների կանգնեցման կետերի մշակման և տեխնիկական սպասարկման ծառայություններ - ավտոճանապարհների նորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ - օդանավակայանի վերթիռվայրէջքային գոտիների, ներառյալ գետնավարման ճանապարհները և համանման կառույցները, շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ

	<p>- ճանապարհային, ավտոկայանատեղիների և համանման պատվածքների մակերեսի, գծանշման աշխատանքներ</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - էստակադների, թունելների, կամուրջների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.13.20 - ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, էլեկտրամատակարարման խողովակաշարերի, հեռախոսագծերի և մալուխների անցկացման հետ կապված ճանապարհային աշխատանքները, տես 42.21, 42.22 - երկաթուղիների համար էլեկտրամատակարարման գծերի անցկացման շինարարական աշխատանքները, տես 42.22.21
42.12	Երկաթուղիներ վերգետնյա և ստորգետնյա. վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.12.1	Երկաթուղիներ վերգետնյա և ստորգետնյա
42.12.10	<p>Երկաթուղիներ վերգետնյա և ստորգետնյա</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - երկաթուղային պաստառներ երկաթուղիների, տրամվայների, ստորգետնյա կամ վերգետնյա քաղաքային արագագնաց տրանսպորտային համակարգերի համար - երկաթուղիների էլեկտրաֆիկացման կառուցատարրեր <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - երկաթուղային երթևեկության համար ստորգետնյա թունելները, տես 42.13.10
42.12.2	Վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.12.20	<p>Վերգետնյա և ստորգետնյա երկաթուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - երկաթուղիների, ներառյալ ստորգետնյա երկաթուղիները, շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ ռելսուղիների խճապատման և տեղադրման աշխատանքներ, սլաքային հաղորդակների, սլաքների, սլաքային գծանցումների հավաքակցման աշխատանքներ, երկաթուղային երթևեկության կառավարման և անվտանգության ապահովման համակարգերի տեղադրման աշխատանքներ, ճոպանուղիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ, երկաթուղիների վերականգնման և վերանորոգման ծառայություններ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - ստորգետնյա երկաթուղիների թունելների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.13.20
42.13	Կամուրջներ և թունելներ. կամուրջների և թունելների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.13.1	Կամուրջներ և թունելներ
42.13.10	<p>Կամուրջներ և թունելներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - կամուրջներ և ուղեկամուրջներ (մետաղե, բետոնե կամ այլ նյութերից) բոլոր տեսակի ցամաքային տրանսպորտի և հետիոտների համար - ավտոճանապարհային էստակադներ ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության համար - թունելներ - ստորգետնյա երկաթուղային երթևեկության հետ կապված թունելային կառուցատարրեր <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - փողոցի ավտոմոբիլային թունելները և հետիոտնի գետնանցումները, տես 42.11.10 - հանքագործական արդյունաբերության համար կառուցատարրերը, տես 42.99.11
42.13.2	Կամուրջների և թունելների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.13.20	<p>Կամուրջների և թունելների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - ավտոմայրուղիների, ավտոմոբիլային ճանապարհների, երկաթուղիների և օդանավակայանի վերթիզվայրէջքային գոտիների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.11, 42.12 - հիդրոտեխնիկական շինարարական աշխատանքները, տես 42.91 - պողպատե շինարարական կոնստրուկցիաների հավաքակցման աշխատանքները, տես 43.99.50 - հանքահորերի անցահատման աշխատանքները, տես 43.99.90
42.2	Կոմունալ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.21	Ջրային և գազային տնտեսության կոմունալ կառույցներ և դրանց շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.21.1	Ջրային և գազային տնտեսության կոմունալ կառույցներ
42.21.11	Ջեղուկների և գազերի մայրուղային խողովակաշարեր
	Տվյալ ենթակարգը ներառում է՝

	<p>- վերգետնյա և ստորգետնյա մայրուղային խողովակաշարեր նավթամթերքի և գազի վերամղում</p> <p>- վերգետնյա և ստորգետնյա մայրուղային խողովակաշարեր նավթամթերքի ջրի և այլ մթերքի վերամղում</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <p>- մայրուղային խողովակաշարեր ներառող քաղաքային (տեղական նշանակության) գազաբաշխիչ կամ ջրաբաշխիչ համակարգերը, տես 42.21.12</p>
42.21.12	<p>Ջեղուկների և գազերի համար տեղական նշանակության խողովակաշարեր</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- տեղական խողովակաշարեր ջրի, կոյուղաջրերի և այլ հեղուկների ու գազերի համար</p>
42.21.13	<p>Ոռոգման համակարգեր. ջրատարներ և ջրմուղային համակարգեր. ջրամաքրման կայաններ, կեղտաջրերի մաքրման կայաններ և պոմպակայաններ</p>
42.21.2	<p>Ջրային և գազային տնտեսության կոմունալ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <p>- խրանուղիների փորման աշխատանքները, տես 43.12.12</p>
42.21.21	<p>Մայրուղային խողովակաշարերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- վերգետնյա, ստորգետնյա, ստորջրյա մայրուղային խողովակաշարերի (նավթի, գազի, ջրի, անձրևաջրերի, կոյուղաջրերի և այլ հեղուկների համար) անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.21.22	<p>Տեղական նշանակության խողովակաշարերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ, ներառյալ օժանդակ աշխատանքները</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- տեղական նշանակության խողովակաշարերի (ջրի, անձրևաջրերի, կոյուղաջրերի, տաք ջրի, գազի, գոլորշու և այլ հեղուկների համար) անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.21.23	<p>Ոռոգման համակարգերի, ջրատարների և ջրմուղային համակարգերի, ջրամաքրման կայանների, կոյուղաջրերի մաքրման կայանների և պոմպակայանների շինարարության շինարարական աշխատանքներ</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <p>- խողովակաշարերի անցկացման, ջրմուղի և կոյուղու համակարգերի խողովակաշարերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.21.21 (մայրուղային) և 42.21.22 (տեղական նշանակության) համապատասխանաբար</p>
42.21.24	<p>Ջրային հորատանցքերի և սեպտիկ համակարգերի հավաքակցման աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- ջրառման հորատանցքեր կամ ջրհորերի հորատման, հատուկ մասնագիտացում պահանջող շինարարական աշխատանքներ</p> <p>- ջրառման պոմպերի և ջրառման խողովակաշարերի համակարգերի հավաքակցման աշխատանքներ</p>
42.22	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի համար կոմունալ կառույցներ և դրանց շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.22.1	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի համար կոմունալ կառույցներ</p>
42.22.11	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական մայրուղային գծեր</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- գզալի երկայնության բարձր լարման էլեկտրահաղորդագծեր (ուժային մալուխներ)</p> <p>- վերգետնյա և ստորջրյա գզալի երկայնության հեռահաղորդակցական գծեր (մալուխներ)</p>
42.22.12	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական տեղային գծեր</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- տեղային (քաղաքային) էլեկտրահաղորդագծեր</p> <p>- հեռահաղորդակցական գծեր (մալուխներ)</p> <p>- օժանդակ կառույցներ՝ հաղորդագծերի աշտարակային հենարաններ, ներառյալ ակեհավաքները և տրանսֆորմատորային կայանները ու ենթակայանները, տեղային սահմաններում էլեկտրականության բաշխման համար</p>
42.22.13	<p>Էլեկտրակայաններ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <p>- ծանր էլեկտրաէներգիական կայաններ և սարքավորանք, ներառյալ միջուկային էլեկտրակայանների համար կայանները և սարքավորանքը</p>
42.22.2	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի համար կոմունալ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>
42.22.21	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական մայրուղային գծերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p>

	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - մայրուղային, զգալի երկայնության, վերգետնյա էլեկտրահաղորդագծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ, ներառյալ երկաթուղիների համար գծերը - մայրուղային, զգալի երկայնության, ստորջրյա կամ ստորգետնյա էլեկտրահաղորդագծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ - զգալի երկայնության վերգետնյա հեռահաղորդակցական գծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ - զգալի երկայնության, ստորջրյա և ստորգետնյա հեռահաղորդակցական գծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - տեղային մայուխների անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.22.22 - խրանուղիների փորման աշխատանքները, տես 43.12.12
42.22.22	<p>Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական տեղային գծերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - ստորգետնյա և վերգետնյա, տեղային էլեկտրահաղորդագծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ, ներառյալ օժանդակ աշխատանքները՝ տրանսֆորմատորային կայանների ու ենթակայանների, տեղային սահմաններում էլեկտրականության բաշխման համար, շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները - տեղային վերգետնյա և ստորգետնյա հեռահաղորդակցական գծերի անցկացման ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ, ներառյալ օժանդակ աշխատանքները՝ հաղորդագծերի աշտարակային հենարանների հավաքակցման ընդհանուր շինարարական աշխատանքները - պլեհավաքների և տեղային սահմաններում էլեկտրականության բաշխման համար տրանսֆորմատորային կայանների ու ենթակայանների հավաքակցման ընդհանուր շինարարական աշխատանքներ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական մայրուղային գծերի անցկացման ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.22.21 - խրանուղիների փորման աշխատանքները, տես 43.12.12 - շենքի սահմաններում մալուխային հեռուստատեսության գծերի անցկացման ծառայությունները, տես 43.21.10
42.22.23	<p>Էլեկտրակայանների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - բոլոր տեսակի էլեկտրակայանների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.9	Քաղաքացիական շինարարության այլ կառույցներ և դրանց շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.91	Ջրային կառույցներ և դրանց շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.91.1	Առափնյա և նավահանգստային կառույցներ, ամբարտակներ, ջրարգելակներ և օժանդակ հիդրոմեխանիկական կառույցներ
42.91.10	<p>Առափնյա և նավահանգստային կառույցներ, ամբարտակներ, ջրարգելակներ և օժանդակ հիդրոմեխանիկական կառույցներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - նավահանգստի ջրատարածքի հատակը և նավահանգստի ջրանցքները, պատնեշներ, նավամատույցներ և համանման կառույցներ, ջրային տրանսպորտի երթևեկության համար գետային և ջրանցքների կառույցների - ամբարտակներ և համանման ջրարգելակային կառույցներ ու լիրաթմբեր առափնյա և այլ ափամերձ հատվածամասերի համար
42.91.2	Առափնյա և նավահանգստային կառույցների, ամբարտակների, ջրարգելակների և օժանդակ հիդրոմեխանիկական կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.91.20	<p>Առափնյա և նավահանգստային կառույցների, ամբարտակների, ջրարգելակների և օժանդակ հիդրոմեխանիկական կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - նավահանգստային և գետային կառույցների, պատնեշների, երկկողմանի նավամատույցների, ամբարտակների, նավանորոգարանների և համանման նավահանգստային կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ, ներառյալ նորոգումը - ամբարտակների և պատնեշների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ, ներառյալ նորոգումը - ջրարգելակների, ջրարգելակային փակաղակների, փակաղակների, նավաբարձիչների, նավերի ջրարկման և ափահանման թեք սահահարթակների, ջրանետ ամբարտակների և այլ հիդրոմեխանիկական կառույցների շինարարության ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ - ջրատարածքի հատակի հողահանման աշխատանքներ, քարի բեկորների, տիղմային նստվածքների հեռացման և այլ հիդրոտեխնիկական աշխատանքներ - ջրասուզային աշխատանքներ (տարբեր ջրասուզակներ և այլ տեխնիկաներ) և տարբեր հիդրավլիկ քաղաքացիական աշխատանքներ

	<p>- այլ ջրային կառույցների շինարարության հետ կապված ընդհանուր շինարարական ու նորոգման աշխատանքներ և վերը նշված բոլոր կառույցների նորոգման աշխատանքներ</p> <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - ստորջրյա մալուխների անցկացման աշխատանքները, տես 42.22.21 - էլեկտրակայանների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 42.22.23 - ցցերի խփման աշխատանքները, տես 43.99.30
42.99	Քաղաքացիական շինարարության այլ կառույցներ, չներառված ուրիշ խմբավորումներում, և դրանց շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.99.1	Քաղաքացիական շինարարության այլ կառույցներ
42.99.11	<p>Հանքարդյունահանող և մշակող արդյունաբերության կառույցներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - հանքարդյունահանող արդյունաբերության կառույցներ և օժանդակ շինություններ՝ հանքագործական աշխատանքների հետ կապված բեռնման, բեռնաթափման կայաններ, հիմնային հանքափողեր և բարձրակներ, հանքային թունելներ և հորիզոնական փորանցքեր - հիմնական քիմիական նյութերի, միացությունների, դեղագործական պատրաստուկների և այլ քիմիական նյութերի արտադրության համար արդյունաբերական կառույցներ - քիմիական արդյունաբերության և դրա հետ կապված մշակող արդյունաբերության կառույցներ՝ հրահալոցներ և կոքսահնոցներ - մշակող արդյունաբերության համար մասնագիտացված կառույցներ, չներառված ուրիշ խմբավորումներում, օրինակ՝ թուջածուլման արտադրամասերը <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - որոշակի արտադրատեսակների արտադրության համար ոչ մասնագիտացված արդյունաբերական շենքերը և կառույցները, տես 41.00.20
42.99.12	<p>Սպորտային և հանգստավայրերի կառույցներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - սպորտային խաղերի՝ ֆուտբոլի, բասկետբոլի, ռեգբիի, մարմնամարզության, ավտոմոբիլային կամ հեծանիվների մրցարշավների և ձիարշավների համար բացօթյա մարզադաշտեր և մարզահրապարակներ - հանգստավայրերի կառույցներ, օրինակ՝ գոլֆի համար խաղահրապարակներ, լողափի կառույցներ, սարերում ապաստարաններ, հանգստի համար զբոսայգիների հատվածամասեր և կառույցներ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - փակ սպորտային կառույցները և հանդիսատեսների համար տեղերը, տես 41.00.20
42.99.19	<p>Քաղաքացիական շինարարության այլ կառույցներ, չներառված ուրիշ խմբավորումներում</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - բաժանված հողեր (հողամասեր), ներառյալ ճանապարհների, հաղորդակցուղիների հասանելիությունը ապահովող և/կամ համանման բարեկարգված տարածքները - քաղաքացիական շինարարության այլ կառույցներ, չներառված ուրիշ խմբավորումներում
42.99.2	Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
42.99.21	<p>Հանքարդյունահանող և մշակող արդյունաբերության կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - հանքարդյունահանող արդյունաբերության կառույցների, օրինակ՝ բեռնման, բեռնաթափման կայանների, հիմնային հանքափողերի և բարձրակների, հրահալոցների և կոքսահնոցների շինարարության հետ կապված ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ - քիմիական արդյունաբերության կառույցների և օժանդակ շինությունների շինարարության ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ - մշակող արդյունաբերության համար այլ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական և նորոգման աշխատանքներ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - պահեստների և արդյունաբերական շենքերի շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքները, տես 41.00.40
42.99.22	<p>Բացօթյա մարզադաշտերի և սպորտային մարզահրապարակների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - սպորտային խաղերի՝ ֆուտբոլի, բասկետբոլի, ռեգբիի, մարմնամարզության, ավտոմոբիլային կամ հեծանիվների մրցարշավների և ձիարշավների համար բացօթյա մարզադաշտերի և մարզահրապարակների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ - հանգստի համար կառույցների՝ գոլֆի համար խաղահրապարակների, լողափի կառույցների, սարերում ապաստարանների, հանգստի համար զբոսայգիների հատվածամասերի և կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ

	<p><i>Բացառվում է՝</i> - <i>շինհրապարակների նախապատրաստման և նախնական հողային աշխատանքները, տես 43.12.1</i></p>
42.99.29	<p>Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ</p> <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - հողերի բաժանում հողամասերի և դրանց բարեկարգումը, ներառյալ ճանապարհների, հաղորդակցուղիների հասանելիության ապահովումը և/կամ տարածքների բարեկարգման համանման նախնական աշխատանքները - քաղաքացիական շինարարության այլ կառույցների, չներառված ուրիշ խմբավորումներում, շինարարության ընդհանուր շինարարական աշխատանքներ
43	Մասնագիտացված շինարարական աշխատանքներ
43.1	Շենքերի և շինությունների քանդման աշխատանքներ և շինհրապարակների նախապատրաստման աշխատանքներ
43.11	Շենքերի և շինությունների քանդման աշխատանքներ
43.11.1	Շենքերի և շինությունների քանդման աշխատանքներ
43.11.10	Շենքերի և շինությունների քանդման աշխատանքներ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - շենքերի և այլ կառույցների կազմատման և քանդման աշխատանքներ - կազմատման և քանդման աշխատանքներ՝ փողոցների և մայրուղիների շինարարության համար
43.12	Շինհրապարակների նախապատրաստման աշխատանքներ
43.12.1	Շինհրապարակների նախապատրաստման աշխատանքներ
43.12.11	Գրունտի և հողերի նախապատրաստման աշխատանքներ, հողերի մաքրման աշխատանքներ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - գյուղատնտեսական հողերի նախապատրաստական աշխատանքներ - հետագա շինարարական աշխատանքների համար շինհրապարակների նախապատրաստում, ներառյալ հորատապայթեցման և ժայռային ապարների հեռացման աշխատանքները - հանքարդոժական աշխատանքների համար տարածքների նախապատրաստում՝ մակաշերտի հեռացման և օգտակար հանածոների հանքավայրերի կամ տեղանքի շահագործման և նախապատրաստական աշխատանքներ, ներառյալ թունելների փորումը, բացի նավթի և գազի արդյունահանման հետ կապված ծառայություններից - շինհրապարակների մաքրման և բուսականության հեռացման աշխատանքներ - գրունտի ամրացման աշխատանքներ - մալուխների կամ ցամաքուրդային խողովակների անցկացման համար հորիզոնական անցուղիների հորատում - տարածքների ցամաքուրդի համար խրամուղիների փորման աշխատանքներ <p><i>Բացառվում է՝</i> - <i>նավթի և բնական գազի արդյունահանման հետ կապված հորատման աշխատանքները, տես 09.10.11</i> - <i>ջրաման հորատանքների հորատումը, տես 42.21.24</i></p>
43.12.12	Գրունտի փորման և տեղափոխման աշխատանքներ
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - խրամուղիների փորում կոմունալ ցանցերի, քաղաքային ցամաքուրդային ցանցերի, տարբեր ճանապարհային և այլ աշխատանքների համար - տարբեր կառուցվածքների համար սովորական խրամուղիների, փոսորակների փորում - գրունտի աղտոտված շերտերի հեռացում - տարածքների վերականգնման աշխատանքներ - ճանապարհաշինարարության (ավտոմոբիլային, ավտոմայրուղային, երկաթուղային և այլն) նախապատրաստական խոշորամասշտաբ հողային աշխատանքներ, հողապատնեշների փորում, հարթում, գրունտի տեղափոխում - գրունտի փորման և տեղափոխման այլ աշխատանքներ, չներառված ուրիշ խմբավորումներում
43.13	Չետախուզական հորատում և գայլիկոնում
43.13.1	Չետախուզական հորատում և գայլիկոնում
43.13.10	Չետախուզական հորատում և գայլիկոնում
	<p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - հետախուզական հորատում և գայլիկոնում, շինարարական, երկրաֆիզիկական, երկրաբանական և համանման հետազոտությունների համար հանուկի նմուշառում <p><i>Բացառվում է՝</i> - <i>նավթի և բնական գազի արդյունահանման հետ կապված հորատման աշխատանքները, տես 09.10.11</i> - <i>հանքագործական աշխատանքների ընթացքում իրականացվող հետախուզական հորատումը և գայլիկոնումը, տես 09.90.1</i></p>

	- ջրառման հորատանցքերի հորատումը, տես 42.21.24
43.2	Էլեկտրահավաքակցման, ջրամատակարարման և այլ շինարարական հավաքակցման աշխատանքներ
43.21	Էլեկտրահավաքակցման աշխատանքներ
43.21.1	Էլեկտրահավաքակցման աշխատանքներ
43.21.10	Էլեկտրահավաքակցման աշխատանքներ <p>Տվյալ ենթակարգը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"> - շենքերում և այլ շինարարական կառույցներում, հատուկ որակավորում պահանջող էլեկտրամոնտաժային աշխատանքներ՝ լուսավորման և էլեկտրամատակարարման հիմնական ցանցերի կամ էլեկտրաարմատուրների հավաքակցման համար - էլեկտրամոնտաժային աշխատանքներ կապված սարքերի տեղադրման հետ - վթարային էլեկտրամատակարարման համակարգերի համար լուսավորման և էլեկտրամատակարարման ցանցերի կամ էլեկտրաարմատուրների հավաքակցման աշխատանքներ - շինհրապարակներում հրդեհային և պահպանական ազդանշանային համակարգերի հավաքակցման աշխատանքներ - բոլոր տեսակի կենցաղային ալեհավաքների, ներառյալ արբանյակային ալեհավաքները, հավաքակցման աշխատանքներ - շենքերում մալուխային հեռուստատեսության հաղորդագծերի և մալուխային համակարգերի հավաքակցման աշխատանքներ - հեռահաղորդակցական լարերի անցկացման էլեկտրամոնտաժային աշխատանքներ - այլ էլեկտրական սարքավորանքի, ներառյալ արևային էներգիայի էլեկտրական հավաքիչները, շրիշակային էլեկտրական ջեռուցիչները, հավաքակցման աշխատանքներ - էլեկտրատեղափոխի ծախսի հաշվիչների տեղադրման աշխատանքներ - ճանապարհների, օդանավակայանների, նավահանգիստների լուսավորման և ազդանշանային համակարգերի հավաքակցման աշխատանքներ <p><i>Բացառվում է՝</i></p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրակայաններում էլեկտրաշարժիչների գեներատորների և տրանսֆորմատորների հավաքակցման աշխատանքները, տես 33.20.50 - երկաթուղիներում երթևեկության կառավարման և անվտանգության համակարգերի հավաքակցման աշխատանքները, տես 42.12.20 - ցայտաջրմուղային համակարգերի հավաքակցման աշխատանքները, տես 43.22.11 - ջեռուցման սարքավորանքի հավաքակցման աշխատանքները, տես 43.22.12 - հակահրդեհային պաշտպանությանն ուղղված աշխատանքները, տես 43.29.11
43.22	Ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման և օդի լավորակման համակարգերի հավաքակցման աշխատանքներ
43.22.1	Ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման և օդի լավորակման համակարգերի հավաքակցման աշխատանքներ
